

ՖԱԿՈՒԼՏԵՏ՝ ԲԱՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ԱՄԲԻՈՆ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԹԵՄԱ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՀԵՏ

/ THE WORK OF THE SOCIOLOGICAL PEDAGOGUE FOR THE CHILDREN WHO
NEED SPECIAL EDUCATIONAL CODITIONS /

ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ ԹՈՎՄԱՅԱՅԱՆ ԼԻՊԱ ԱՐՏԱՉԵՍԻ
ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ մ.գ.թ., դոց. Ա. Հարությունյան

Հետազոտության արդիականությունը: Ներառական կրթության գաղափարի երաշխիքը մարդու կրթության իրավունքն է: Այն հիմք է ավելի արդար հասարակության կառուցման: Ներառումն արժեքային համակարգ է, ըստ որի բոլոր աշակերտներն ունեն կրթության հասանելիության հավասարաչափ իրավունք՝ կրթության բոլոր մակարդակներում:

Հետազոտության օբյեկտը: ՀՀ հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ծրագրով իրականացվող գործունեությունն է:

Հետազոտության առարկան: ՀՀ հանրակրթական դպրոցներում ներառական կրթության գործընթացն է, կազմակերպման ձևերը, եղանակները, ուղիները:

Հետազոտության նպատակը: Տեսական և գործնական ուսումնասիրությունների միջոցով բացահայտել ՀՀ հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ծրագրով իրականացվող մանկավարժական գործընթացն և օժանդակել նրան:

Հետազոտության խնդիրները: 1. Բացահայտել ներառական կրթության նպատակը, խնդիրները և առանձնահատկությունները:

2. Ուսումնասիրել կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման իրավական հիմքերը:

3. Ուսումնասիրել և վերլուծաբար ներկայացնել ներառական կրթության պլանավորումը և գործածումը:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտությունն իրականացվել է ք Արմա-վիրի N8 հիմնական դպրոցի 3-րդ դասարանում

Ուսումնասիրության գիտահետազոտական մեթոդները:

- . մասնագիտական գրականության վերլուծություն
- . դիտում
- . զրույց
- . դպրոցական փաստաթղթերի ուսումնասիրություն
- . անկետավորում

Հետազոտության տեսական նշանակությունը: ՀՀ հանրակրթական դպրոցներում ներառական կրթության հիմնախնդրի համակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս այդ առումով գնահատել ներկա իրավիճակը, ինչպես նաև կանխորոշել հետագա պլաններն ու իրականացվող գործընթաց-ները:

Հետազոտության նորույթը և գործնական նշանակությունը: Շարադրանքում բացահայտված ներառական կրթության առանձնահատկությունները, ձևերն ու մեթոդները որոշակի մեթոդական ուղեցույց կարող են լինել ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Մագիստրոսական թեզը կազմված է <<Ներածությունից>>, երեք՝ տրամաբանորեն փոխկապակցված գլուխներից (6 ենթագլուխներից), <<Եզրակացությունից>>, <<Գրականության ցանկից>> և <<Հավելվածից>>: Աշխատանքի ծավալը 76 համակարգչային էջ է:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Ներառական կրթությունը որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրման միջոց
2. Ներառական կրթությունը որպես մանկավարժական գործընթացի կազմակերպման ձև
3. Ներառական կրթության իրականացման իրավական նախադրյալները
4. Սոց. մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում,
5. Ներառական կրթության ներդրման ու կիրառման գործընթացի առանձնահատկություններն ու սկզբունքները

Հետազոտության վարկած: Հետազոտության գործընթացում հաշվի են առնվել գիտավարկածային հետևյալ դրույթները.

1. Ներառական կրթությունը որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրման գործընթացի վերլուծությունը հնարավորություն կընձեռի հասկանալ ներառական կրթություն հասկացության իմաստն ու բովանդակությունը, ինչպես նաև ընկալել ներառական կրթությունը որպես մանկավարժական գործընթացի կազմակերպման ձև:
2. Ներառական կրթության իրականացման իրավական նախադրյալների ուսումնասիրումը անպայման կնպաստի ՀՀ-ում Ներառական կրթության իրականացման իրավական դաշտի ապահովմանը:
3. Դպրոցում սոց. մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունների քննարկումն ու վերլուծությունը կնպաստի ավելի արդյունավետ իրականացնել ներառական կրթությունը, վեր հանել նկատված բացթողումները, բացահայտել հաղթահարման ուղիները և ընդգծել զարգացման հեռանկարները:

ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով»:

Ներառական կրթությունը արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակույթային ու համայնքային կյանքին: Կրթության առանձնահուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տեսանկյունից դա ենթադրում է հավասար պայմանների ստեղծում և նրանց կարիքին համապատասխան՝ որակյալ կրթության հնարավորություն: Այստեղ ևս սոց.մանկավարժի խնդիրն է իրագեկել ծնողներին, ծանոթացնել օրենքներին, իրենց ունեցած իրավունքներին, որպեսզի ծնողը կարողանա իր երեխայի համար ընտրել առավել հարմար պայմաններ:

Ներառական ուսուցման ներուժման հարցը բավական լուրջ քայլ է: Շատ երկրներ սկսեցին վերափոխել իրենց կրթական համակարգերը: Նրանք սկսեցին ընդհանուր հանրակրթական դպրոցում սովորող երեխաների շրջանակը ընդլայնելուց: Կրթությունը կազմակերպվեց այնպես, որ հաշմանդամ երեխաները սովորեն առողջ երեխաների հետ միասին: Որոշ երկրներ հետևեցին նրանց օրինակին: Հետևելով Սալամանկայի համաժողովի դրույթներին՝ բազմաթիվ պետություններ հանդես եկան նախաձեռնություններով:

3. Ներառական կրթության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է, որը հենվում է յուրաքանչյուր երեխայի անահատական կարիքների գնահատման և կրթության պրոցեսին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման պահանջի վրա:

Ներառական կրթությունը հոգ է տանում բոլոր սովորողների մասին, հատկապես նրանց, ովքեր հաճախ զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով հատուկ կարիքներով սովորողներին, հաշմանդամներին, էթնիկ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և այլոց: Ներառական կրթության իրականացման ճանապարհին կարևորվում է բազմամասնագիտական թիմի ստեղծումը, որի մեջ ներգրավվում է երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ՝ ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ, ԵՊՀ, երեխայի ծնողը և համակարգողը: Այս ծրագրում ամեն մեկն ունի իր յուրովի աշխատանքը:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Երեխաների իրավունքներին առնչվող ՀՀ օրենքների և ՀՀ այլ իրավական ակտերի ժողովածու, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2005թ., 360 էջ:
2. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթական չափորոշիչ, Երևան, 2006թ., 272 էջ:
3. Ժամային դեկլարացիա 1990թ
4. Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ, ՄԱԿ, Հուլիսի կամուրջ հկ, Երևան, 1994թ., 76 էջ:
5. Համաշխարհային Կրթական Ֆորումը 2000թ.
6. Միավորված Ազգեր, 1989թ
7. Միջգերատեսչական Հանձնաժողով, 1990թ
8. ՅՈՒՆԵՍԿՕ, Բաց ֆայլ ներառական կրթության մասին, ԱՄՆ, 2004թ., 177 էջ
9. Ներառական կրթության և ծնողների խորհուրդ, 1996թ 28 էջ
10. Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ աշխատող հատուկ մանկավարժի ուղեցույց, Երևան, 2008]
11. Պիդջլ, Մեյջեր, Խեզարտի, 1997թ.
12. Օրենքներ՝ հաշմանդամ երեխաների կրթության իրավունքների մասին, 'Հուլիսի կամուրջ' հկ, Երևան, 1999թ., 16 էջ:
13. Кафьян Э. М., Азарян А. Р. Интегрированное обучение и воспитание детей с отклонениями развития в Армении // Дефектология. 2006
14. Сулейменова Р. А., О Включении детей с ограниченными возможностями в общеобразовательный процесс
15. <https://krtutyun.wordpress.com/ներառական-կրթություն/>
16. <http://www.edu.am>
17. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=67166>
18. <http://assessmentofeducationalneeds.com/>

